

## Տ. ԽՈՍՐՈՎ ՔԱՀԱՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

(ավազանի անունը՝ Խորեն)

Ծնվել է 1973 թ. նոյեմբերի 22-ին Էջմիածին քաղաքում:

1980-1990 թթ. սովորել է տեղի Մ. Գորկու անվան № 5 ռուսական միջնակարգ դպրոցում:

1983-1988 թթ. միաժամանակ սովորել է տեղի Մակար Եկմալյանի անվան երաժշտական դպրոցում:

1988-1990 թթ. ծառայել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում:

1990-1996 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1996 թ. հոկտեմբերի 30-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ և Ռուս Եկեղեցիների հարաբերությունները ԺԸ դարում» թեմայով՝ արժանանալով «բավարար» գնահատականի:

1996-1998 թթ. աշխատել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում իբրև վերակացու:

1998-2001 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերի երկրորդ բանակային կորպուսում որպես հոգևոր խորհրդական:

2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, ձեռնադրվել է քահանա: